ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

9 փետրվարի 2026թ. թիվ 111

Ա.ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԵՎ Է.ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի աշխատակից՝ մարզում պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող շինարարական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրող Արման Մկրտչյանին և վարորդ Էմմանուել Ավետիսյանին ս/թ փետրվարի 9-ին մեկ օրով գործուղել Ստեփանավան՝ «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի թիվ 1 հիմնական դպրոց», «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի Սուրբ Գրիգոր Լուսավորչի անվան թիվ 2 հիմնական դպրոց», «ՀՀ Լոռու մարզի Ագարակի միջնակարգ դպրոց», «ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակի միջնակարգ դպրոց» և «ՀՀ Լոռու մարզի Վարդաբլուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ներում շինարարական աշխատանքները դիտարկելու համար:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը՝ բացառությամբ ճանապարհածախսի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

2/9/2026

X

ՄԵՐԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Signed by: DALLAKYAN MERI 5303860493

Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆ

2026թ. փետրվարի 9
ք.Վանաձոր